ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի՝ Ճապոնիա կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վարդան Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Տոկիո, Ճապոնիա, 2017թ. նոյեմբերի 1-3-ը,

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիա

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) տեխնոլոգիաների և նորարարությունների 6-րդ համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի ընթացքում ի թիվս մի շարք կարևոր հարցերի, քննարկվել են նորարարական տեխնոլոգիական լուծումները, որոնք նախատեսված են գլոբալ մատակարարման շղթաների անվտանգության համար, ներկայացվել են սահմանային հսկողության ամենօրյա գործողություններին օժանդակելու առկա տեխնոլոգիական լուծումները, լավագույն փորձը նորարարությունների և տեխնոլոգիաների օգտագործման ոլորտում, քննարկվել են տեխնոլոգիական զարգացումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին մասնակցել են ՀՄԿ 100-ից ավել անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարներ, շուրջ 500 միջազգային պատվիրակներ՝ աշխարհի տարբեր պետական գործակալությունների ներկայացուցիչներ, տեխնոլոգիական մատակարարներ, գիտահետազոտական ինստիտուտների, միջազգային կազմակերպությունների, խորհրդատվական գործակալությունների և այլ գործարար

միջավայրի ներկայացուցիչներ: Համաժողովին զուգահեռ կազմակերպվել է նաև ցուցահանդես, որի ժամանակ ցուցադրվել են մաքսային հսկողության սարքավորումներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի ժամանակ կազմակերպվել են երկկողմ հանդիպումներ Մոլդովայի և Վրաստանի մաքսային ծառայությունների ղեկավարների հետ: Վրաստանի մաքսային ծառայության ղեկավարի հետ քննարկվել են երկու երկրների սահմանային անցման կետերի համատեղ օգտագործման մեխանիզմները, մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման հետ կապված հարցեր: Մոլդովայի մաքսային ծառայության ղեկավարի հետ քննարկվել են 2018 թվականի ընթացքում ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի շրջանակներում իրականացվելիք քայլերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաժողովի որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

10. Գործուղվողը՝

Վարդան Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

06.11.2017թ.